**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար իրավաբանական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 ծածկագրով պայմանագրում 2025 թվականի դեկտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** N ՀՀԱՄՄՀ-ՆԲՄԾՁԲ-24/138 ծածկագրով պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայության ժամկետը անհաժեշտություն է առաջացել երկարաձգել 30 օրով, որի արդյունքում պայմանագրի գնի ավելացումը չի գերազանցում Պայմանագրի գնի 10%-ը:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի 4.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. ««4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8,666,667.00 (ութ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»:

- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը հաստատվել է նոր խմբագրությամբ, համաձայն՝ Համաձայնագիր 3-ի Հավելված 1-ի:
- Պայամանգրի և Պայմանագրի շրջանակում 2025թ. հունվարի 20-ին կնքված Համաձայնագիր N 1-ի Հավելված 1-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը փոփոխվել և հաստատվել՝ ըստ Համաձայնագիր 3-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Մեծամորի համայնքապետարանի և «Իրավաբանական խորհրդատվական խումբ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի 7.5 կետով սահմանված պահանջների համաձայն:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**